# ՀԱՄՇԽԱՐՀԱՅԻՆ ՕՎԿԻԱՆՈՍԻ ԱՂԲԻ «ԿՂԶԻՆԵՐԸ»

*Միկրոպլաստիկները այնքան էլ նկատելի չեն: Դրանք պարունակում են բազմաթիվ թունավոր քիմիկատներ, որոնք ավելացվում են պլաստիկներին՝ դրանք ճկուն, գունավոր, ջրակայուն կամ հրակայուն դարձնելու համար: Միկրոպլաստիկները պարունակում են նեյրոտոքսիններ և մարդու էնդոկրին համակարգը խաթարող այլ նյութեր, որոնք կարող են առաջացնել քաղցկեղ և այլ առողջական խնդիրներ: Քիմիական նյութերով հագեցած այս մասնիկները մտնում են սննդային շղթա և կուտակվում ձկների ու խեցեմորթների մեջ և այդպիսով մենք կլանում ենք միկրոպլաստիկը: Վերջին տարիներին գիտնականները սկսել են միկրոպլաստիկներ հայտնաբերել մարդու հյուսվածքներում: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ օվկիանոսում պլաստիկի քանակը մինչև 2040 թվականը կեռապատկվի և կշարունակի աճել րոպեում 50 կգ արագությամբ: Ամեն տարի ավելի քան 10 միլիոն տոննա պլաստիկ է մտնում օվկիանոս: Այս թափոնների մի մասը տրոհվում է մանր մասնիկների (միկրոպլաստիկների) և կուտակվում ափամերձ և խոր ծովային նստվածքներում: Մնացած խոշոր կտորները տասնամյակներ շարունակ լողում են ջրի մեջ՝ կազմելով աղբի ամբողջ կղզիներ: Ամենամեծերից մեկը Խաղաղ օվկիանոսում, այսպես կոչված, աղբի տեղն է: Սրանք հարյուրավոր կիլոմետրանոց ջրային տարածքներ են, որոնք ծածկված են մարդու ստեղծած թափոններով: Տեղի ստույգ տարածքի սահմաններն անհայտ են, ըստ տարբեր գնահատականների, խոսքը 0,7–1,6 միլիոն կմ² մակերեսի և շուրջ 100 մլն տոննա թափոնի մասին է:*

*Ներկայումս նավերի իրանը ներկվում է կարմիր գույն ունեցող հատուկ ներկանյութով և իրանը այլևս չի ծածկվում կպչուն օրգանիզմներով: Նավերի արագությունը հատկապես փաք ջրերում ավելանում է մոտ 1/3–ով:*